

Երկկողմ հաղորդակցությունը

ՏԻՄ-հասարակություն կապի արդյունավետ մոդել

ՏԻՄ համակարգը Հայաստանում տարիների ընթացքում ունեցել է զգալի ձեռքբերումներ: Սակայն ժամանակի մարտահրավերները ներկայացնում են նոր, ավելի մեծ պահանջներ այդ համակարգի հետագա զարգացման համար: Որքան էլ, որ տեղական ինքնակառարման մարմինները նախաձեռնեն բարելավմանն ուղղված քայլեր, մյուս կողմից հասարակությունը ևս պետք է ունենա բավարար ունակություններ համայնքի հառավարման գործընթացին մասնակցություն ունենալու համար: ՏԻՄ-ի զարգացման կարևոր նախադրյալներից մեկն է դիտարկվում երրկողմանի ձևաչափը, որի մի կողմում ՏԻՄ-ն է, մյուսում՝ հասարակությունը, որոնք պետք է հավասարապես հզորացվեն ոլորտի բարելավման համար: Երկկողմանի ձևաչափը նաև հնարավորություն է տալիս ստեղծել արդյունավետ համագործակցության, փոխհամաձայնության, վստահության մթնոլորտ ՏԻՄ-ի և քաղաքացիների միջև:

Եղվարդ համայնքի շրջակա միջավայրի պահպանության հարցերը դիտարկելիս՝ համադրելով Եղվարդ քաղաքի քառամյա զարգացման ծրագրի և հասարակության շրջանում իրականացրած հացումների արդյունքները կարելի է նշել, որ համայնքը ի տարբերություն այլ քաղաքների առանձնանում է բնապահպանական ոչ սուր խնդիրների առկայությամբ: Այնուհանդերձ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք իրականացումից բացի, այդ թվում քաղաքի քառամյա զարգացման ծրագրում ներառված շրջակա միջավայրի պահպանության հարցերի վերաբերյալ չնայած կատարվող և կատարված աշխատանքներին՝ հասարակության շրջանում առկա է բնապահպանական նշանակության որոշակի խնդիրներ, այդ թվում՝ Արգնի-Շամիրամ ջրանցքի աղտոտվածության, թափառող շների թվաքանակի ավելացման, որոշ կոյուղագծերի մաշվածության պատճառով առաջացած վթարների հետ կապված խնդիրները: Հանրության շրջանում իրականացրած ուսումնասիրությունները նաև ցույց են տվել, որ բնակիչները կարևորում և ողջունում են համայնքի մասնակցությունը ՀՀ-ում՝ մասնավորապես Կոտայքի մարզում, իրականացվող բնապահպանական ծրագրերին, այդ թվում Հայաստանի ջրամբարաշինության ոլորտում առաջնային հարցերից մեկը համարվող, Ճապոնիայի միջազգային համագործակցության

գործակալության Եղվարդի ջրամբարի կառուցման՝ "Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման" նախագծին: Դիտարկելով վերը նշված խնդիրները կարելի է նշել, որ դրանց լուծմանն ուղղված քայլերը պետք է լինեն երկկողմանի՝ թե՛ ՏԻՄ-ի կողմից, թե՛ հասարակության:

Այս դեպքում դիտարկելով Արզնի-Շամիամ ջրանցքի աղտոտվածության խնդիրը կարելի է նշել, որ աղտոտվածության պատճառը հիմնականում բնակիչների կողմից ջրանցք նետված թափոններն են: Չնայած պատկան մարմինների կողմից ոռոգման սեզոնի ընթացքում կատարված մաքրման աշխատանքների և չնայած այն բանի, որ ջրանցքի շրջակայքում առկա են դատարկ աղբամաններ, կարելի է ասել, որ դրանք փաստում են այն մասին, որ համայնքում աղբահանությունը կատարվում է պատշաճ կարգով, սեզոնային մաքրման աշխատանքները ևս, ինչն էլ հանգեցնում է նրան, որ չնախատեսված վայրում՝ ջրանցք աղբ նետելով բնակիչները իրենք են ստեղծում ջրանցքի աղտոտվածության խնդիրը: Այս խնդրին անդրադարձել է նաև Եղվարդի Օրհուս կենտրոնը՝ կազմակերպել ինչպես հանդիպումներ, քննարկումներ պատկան մարմինների, քաղաքացիների մասնակցությամբ, այնպես էլ ուսուցողական միջոցառումներ հասարակության շրջանում՝ խնդրից որոշակիորեն խուսափելու, կանխելու համար: Խնդրի լուծման համար բացի պատկան մարմինների կողմից կատարվող աշխատանքներից կարելի է շարունակել հասարակության շրջանում իրազեկման աշխատանքները՝ խնդրի կարևորության, դրա հետևանքների, չնախատեսված վայրում աղբ նետելու, նաև այն մասին, որ աղբ նետելով ջրանցքի մեջ ջրանցքը վերածում են "աղբատարի", ինչն էլ ավելի է սրում իրավիճակը՝ առաջացնելով աղբի խցանումներ սելավատարների, ներնտեսային համակարգերի մեջ:

Անդրադառնալով կոյուղագծերի մաշվածության պատճառով առաջացած վթարների խնդրին հարկ է նշել, որ այս խնդիրն առկա է մի շարք համայնքներում, որոնք ներառված են նաև համայնքի զարգացման ծրագրերում: Ըստ էության համակարգում հիմնականում մաշվածության խնդիրն է, որն էլ իր հերթին նպաստում է արձանագրվող վթարների քանակին և չնայած այն բանի, որ այս խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներ են իրականացնում տեղական մարմինները՝ առկա խնդիրը կարգավորելու ուղղությամբ, այնուհանդերձ կան նաև մի շարք միջազգային կառույցներ, որոնք իրականացնում են ծրագրեր ուղղված կոյուղագծերի փոփոխմանը, վերանորոգմանն ու համակարգի բարելավմանը: Նպատակահարմար է ուժեղացնել/հզորացնել տեղական և միջազգային

կազմակերպությունների հետ համագործակցությունը ոլորտի բարելավմանն ուղղված հնարավորություններից օգտվելու, համայնքում ներդնելու, առկա խնդիրների լուծմանն օժանդակելու համար:

Երկկողմանի ձևաչափի կարևորագույն հարցերից է համայնքում խթանել մասնակցության հնարավորությունների միջավայրի ձևավորմանը, որի հիմնական պատճառներից է հանդիսանում՝ մասնակցության համար անհրաժեշտ գիտելիքի առկայության, մասնակցային գործընթացի մեջ ներգրավելու ցանկության և մասնակցային գործընթացում ներգրավելու հնարավորությունների պակասը: ՏԻՄ-երը պետք է նախաձեռնեն քաղաքացիների ակտիվության բարձրացմանը նպաստող միջոցառումներ, որոնք խթան կհանդիսանան նաև համայնք բնակիչ երկխոսության, վստահության, մթնոլորտի ձևավորմանը: Հատկապես հատկանշական կարող է լինել հասարակության ակտիվ մասնակցությունը համայնքում նախատեսվող, իրականացվող բնապահպանական ծրագրերի, շրջակա միջավայրի պահպանության հարցերի վերաբերյալ հանրային լուսմների, քննարկումների գործում, ինչպես օրինակ Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության Եղվարդի ջրամբարի կառուցման՝ "Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման" նախագծի ՇՄԱԳ հանրային լուսմներին մասնակցության, նախագծի իրագործման դեպքում հետագա փուլերի ընթացքում հանրության իրազեկման, մասնակցության հարցում:

Համայնքում մասնակցության կարևոր մեխանիզմներից մեկի ներդնումը՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների առկայությունը, հարթակ է համարվում ՏԻՄ-հասարակություն կապի, երկխոսության համար և դա նպաստում է համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը՝ խորհրդատվություն, առաջարկություններ ներկայացնելով համայնքի ղեկավարին՝ այդ կերպ ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

ՏԻՄ-երը տիրապետում են հանրային հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ տեղեկությունների, ինչպես նաև իրենց լիազորությունների շրջանակներում

քաղաքացիներին մատուցում են հանրային որոշակի ծառայություններ: Օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները և համացանցի հնարավորությունները դրանց միջոցով կարող են նպաստել հանրության իրազեկության մակարդակի բարձրացմանը իրենց գործունեության և դրա արդյունքների մասին, քաղաքացիներին հնարավորություններ ընձեռել՝ մասնակցելու համայնքի կառավարման և ՏԻՄ-երի որոշումների ընդունման գործընթացներին: Համայնքի ՏԻՄ-ի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը նպաստելու գործիքներից մեկն էլ հանդիսանում է նաև ավագանու նիստերի, հանրային քննարկումների առցանց հերաձակումը, որի կիրառումը ևս խթան է հանդիսանում հանրության լայն իրազեկման և մասնակցության ապահովման համար:

Համայնքի շրջակա միջավայրի պահպանությամբ մտահոգված, բնապահպանական խնդիրների նկատմամբ պատասխանատու մոտեցմամբ հասարակության գործում մեծ դեր է խաղում բնապահպանական վարքագծի ձևավորումը, ինչին անմիջականորեն նպաստում է Եղվարդի Օրհուս կենտրոնի գործունեությունը՝ հասարակության, երիտասարդների, պատանիների շրջանում իրականացնելով աշխատանքներ ուղղված շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը, իրազեկության մակարդակի բարձրացմանն ու ակտիվ մասնակցային միջավայրի ձևավորմանը:

Ամփոփելով կարելի է նշել, որ տեղեկատվական համակարգերի ներդրումը, առկա համակարգերի զարգացումն ու կիրառելիության ընդլայնումը, հասարակության շրջանում ակտիվ մասնակցության միջավայրի ձևավորումը հրամայական կարող են դարձնել երկկողմանի հաղորդակցության ձևաչափի հավասարաչափ զարգացմանը, որն էլ լուրջ հիմքեր կստեղծի Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման, համայնքների զարգացման համար, ինչպես նաև կնպաստի համայնքներում հասարակության մասնակցային միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը:

ԵԱՀԿ բնապահպանական հարցերով փորձագետ՝

Ռուզաննա Մանյան